ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2021 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ- ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)









2021 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1 տրիլիոն 586.9 մլրդ դրամ, որը 2021թ. տարեկան հաստատված ցուցանիշին գերազանցում է 10.2 %-ով, իսկ 2021թ. տարեկան ճշտված ցուցանիշին գերազանցում է 1 %-ով: Ընդ որում, 2021 թ. փաստացի ցուցանիշը 2020թ. համապատասխան ցուցանիշից ավել է 14.6 %-ով կամ 201.7 մլրդ դրամով, 2019թ. ցուցանիշին գերազանցում է 8.4 %-ով կամ 122.6 մլրդ դրամով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 26.1 %-ով կամ 328.8 մլրդ դրամով:

2021 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 556 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 17.9 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 17.2 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 26.9 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 158.6 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 6.6 %-ով, սակայն 2019 թ. ցուցանիշից պակաս է 12.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 6.8 %-ով,,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 426.3 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 3.7 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 3.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 19.5 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 113.1 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 8.4 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 11.3 %-ով, բայց 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 3.8 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 84.8 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 24.3 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 10.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 5.7 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 62.7 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 18.2 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 7.6 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 15.5 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 32.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 21.9 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է շուրջ 11.8 %-ով, 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 51.9 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 43 մլրդ դրամ, որը կազմում է 2020 թ. համապատասխան ցուցանիշի 173.5 %-ը, 2019 թ. ցուցանիշի՝ 230.1 %-ը և 2018 թ. ցուցանիշի՝ 247.2 173.5 %-ը,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 47.2 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է շուրջ 93.9 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է շուրջ 2.2 անգամ և 2018թ. ցուցանիշից ավել է 2.1 անգամ,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 66.9 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. համապատասխան ցուցանիշիի 200 %-ը, 2019 թ. ցուցանիշին գերազնացում է 45.9 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 76.7 %-ով:

* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

*** ՀՀ 2021 թվական պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշտված ցուցանիշի աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության ինտերակտիվ բյուջե

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2021թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ և ՀՀ ֆինանսների նախարարության ինտերակտիվ բյուջեն